Սևաքար

Բնակչություն՝ 100

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Սևաքարցիների նախնիները այստեղ են վերաբնակվել Ղարաբաղից՝ 18-րդ դարում: Համայնքի տարածքում և գյուղում կան գյուղատեղիներ (Հունանց ձոր, Քարե նավ, Սրհակ՝ 10-17դդ.), եկեղեցիներ (13-րդ դար), գերեզմանոցներ (10-18դդ.): 20-րդ դարի սկզբներին Բաքվում բնակվող Սևաքարցիների «Մասիս» ընկերության հովանավորությամբ գյուղում դպրոց է կառուցվում: Սևաքարում 1932թ-ին կազմակերպվում է կոլտնտեսություն, որը 1964թ-ին միավորվում է Սյունիքի խարիտնտեսությանը, իսկ 1994թ-ին՝ տարանջատվում: Սևաքարի գյուղական խորհրդում ներառվել էին Սևաքար, Եղեգ (նախկինում՝ Շաբադին), Չափնի և Ըրկենանց գյուղերը: 1991թ-ին Եղեգը և Չափնին տարանջատվում են՝ կազմավորելով ինքնուրույն վարչական միավորներ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1874 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 887 հա, որից՝
- վարելահող՝ 142 հա, բազմամյա տնկարկ՝ 5 հա, խոտհարք՝ 42 հա, արոտ՝ 570 հա, այլ հողատեսք՝129 հա
- բնակավայրերի հողեր՝ 29 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 15 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5 հա,
- անտառային հողեր՝ 932 հա, որից անտառածածկ՝ 674 հա
- ջրային հողեր՝ 6 հա